



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
09 հունվարի 2020 թվականի N 03 -Ա

«ԲԱՐՁՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքի 111-րդ հոդվածով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով և 19-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետով և հիմք ընդունելով Ս.Հակոբյանի դիմումը՝

Կ ա Ր Գ ա դ Ր ՈՒ մ եմ.

1. 2020թ. հունվարի 9-ից լուծել «Բարձրավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Էդիկ Հովհաննիսյանի հետ 2017 թ. փետրվարի 21-ին կնքված N 35 աշխատանքային պայմանագիրը՝ գործողության ժամկետը լրանալու պատճառով:

2. Սառա Հակոբյանին 2020թ. հունվարի 9-ից նշանակել «Բարձրավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ


09.01.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: РОСНОС/АН/ԳՈՒՄ/Ն/4005640117



2020թ. հունվարի 09
ք. Կապան